

զրեցի զսր. աւետարանս ի թվարեութեա. հայկազեան տումարի ՁԻ, ի հայրապետութեն. տր. Արքիստակէսի ի յաթոռ սր. Էջմիածնի: Եւ ի թագաւորութեն. Վրաց Բագրատին. եւ ի դանութեն. Հասան բէկին, ի դառն եւ յանրարի եւ վըշտաշատ ժամանակի, որ երերուն եւ տատանեալ կա ազգ քրիստոնէից ի ձեռն այլազգեաց եւ յանիրաւ պահանջողաց:

Արզ զրեցաւ սր. աւետարանս ի դաւառս Արարադեան ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սր. Ստեփաննոսի եւ հրաշարիառ Կաթողիկէիս եւ մաւրս լուսոյ սր. Ածածնիս. եւ այլ բազմահաւաք սրբոցս որ աստ կան: Ով սր. ընթերցողք, յիշեցէք առ Քս. զԴանիէլ վարդապետ, որ ըստացաւ զսա ի հալալ ընչից եւ յարգար վաստակոց իւրոց յիշատակ իւր եւ ծնաւոց իւրոց, հաւրն իւր Կարապետ քահանային եւ մաւրն իւր Համաւորին եւ եղբարցն իւրոց Վրթանիսին, Ասրատակիսին եւ Գրիգորէս քահանային, եւ տր. Ներսէս Հպրակապետին. եւ ծնողաց եւ եղբարց նորին, եւ Յասի քահանային, եւ որդո նր. Գրիգորէս կուսակրան արեղաին, եւ այլ ամ. արեան մերձաւորաց նց. ամէն: Եւ որք պատահիք ամ. տեսութր. կարգալով կամ աւրինակելով եւ լսելով իշեմջիք աղօթս ձեր եւ ինքն ողորմածն Ած. առ հասարակ ողորմեացի ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս ամէն:

Եւ սակաւ գծողս զՈվաննէս սոսկ անուն արեղայ յիշել ի տր.:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. 54.

(Ձեռ. Էջմ. No. 1500/1511. Բ. Գրքի 159)

601բ. Փառք անսկիզ («բն» եղծուած, մաշուած), անժամանակ, աներբ եւ անուրեք, անորակ եւ անքանակ, գերագոյ եւ համագոյ միասնական սր. երրորդութեն., հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ:

Արզ այս տաւնացոյց կարգեալ բովանդակ տարոյ աշխատութր. տէր Իսրայէլի Սաշենեցոյ եպսի. հրամանաւ Վանական վեպտի., ի խնդրոյ Ջալալ Դօլին տեսուն Սաշենոյ եւ տէր Գրիգորի եպսի.: Որք աղաչեցին զտր. Իսրայէլ եպսն., հայեցեալ ի կորովութի. մտաց նր. եւ ի ժուժկալութի. բարուցն: Եւ նա յանձին կալաւ եւ ջանս եզ գտանել զաւր նահատակութե. սրբոցն, որ գրեալ կայ ի լիակատար պատմութին., համառօտելով նմ. զսքանչելի կատարումն սրբոցն. եւ եզ ընդ այլ կարգեալ յայտաւարան, զոր կարգ ամսոցն հայիւ եւ հոռոմիւ միաշունչ եղեալ... (մի բառ) զտարին կատարեն: Բայց ոմանք յանդէտս եղեալ հակառակեն (ընդգծուածը կարկատած, լրացնում ենք) այսպիսի գեղեց... (կարկատած «իկ ընթերցուա») ծոց, որ աւր ըստ աւրէ գլխելիս մեր զարհուրեցուցանէ եւ զողումն ցաւազին տայ անձանց մերոց: Եւ արդ՝ եթէ

այնպիսեացն է արքայութիւն երկնից, ապա մեզ զի՞նչ լինի ծուլիցս եւ հեղզացելոցս: Այլ միայն յայս ապաւինեալ յառաջ ընթանալ յաւժար սրտիւ եւ առնել զլիշատակ սրբոցն եւ բարեխօս ունել առ Ած., զի հաշտեցի ընդ մեզ եւ բարձցէ յաշխարհէ զպատուհաս մեզաց մերոց, եւ արժանի արասցէ սրբոցն փառաց հասանել ի Քս. Յս. ի տր. մեր, որում փառք յաւիտեանս ամէն:

Ի թվարեութեա. հայոց ի ՁԻ. թուականին զրեցաւ զերբս սոսկացուցիչ ի ձորս Շհասպունեաց ի գեղոս որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ սր. Հաղարարիւրացս եւ Կաթողիկէիցս սր. Ածածնի. եւ սր. Ստեփաննոսի եւ գեղամիջի սր. Գրգրիս. եւ սր. Նշանիս եւ այլ միահամուռ վարդանանց սր. նահատակցս. Ի հայրապետութե. տեսուն Ռստակիսի եւ յաշխարհակալութե. Հասան բակին, որ յաղթեաց Ջհանշային եւ եկեալ ի դաշտն Սօեայ եւ փախըստական արար զՀասանալի եւ երթեալ ի Ղարապաղն եւ անդ եւս զՊարսկաց բռնաւորն զսուլտան... (թերի, թուղթ ընկած լինելու պատճառով):

Տր. Ողորմի Յովսէփ կրանաւորին եւ ծնողաց նորին. եւ հայր մուղղոյն: Յորդանին եւ որդոյն իւրոյ Մկրտիչ կրանաւորին եւ Յակոբ գրչին ամ.:

14ա. Որ ողորմի ստացողի գրոցս պատուական կրանաւորացն Յովսէփ արեղային եւ Յորդանան մուղղոյն եւ ծնողաց նորին եւ Յակոբ գրչին:*

176բ. Ներքին լուսանցքում.

Ով ընթերցողք. եւ կառավար ժամտեղց. յիշեցէք ի սր. յաղաւթս ձեր եւ Ած. ողորմի. ասացէք մօրն իմոյ Ալամշատին, որ զայս գէժս գրելիս էի մայրն իմ փոխեցաւ ի Քս. եւ զիս յոյժ տրտմեցոյց. ով որ լի բերանով Ած. ողորմի ասէ մօրն իմ, Ած. զիւր զամ. մեղան ջնջէ, ամէն:

185ա. Որ ողորմի ստացողի գրոցս տր. Յովսէփ կրանաւորին եւ Յորդանան մղսին. եւ որդոյ նոր. Մկրտչին — եւ ապա աւելացրած է «եւ Գրգրին. եւ Սաշատրին եւ տր. Յոհաննիս քչից. գեղջս»:

235բ. Ներքին լուսանցքում.

Ձար. տր. քչն. յիշեցք. ի բրի., որ մեզ մին ձագի բլիթ երեւ թրուանդայ:

315ա. Որոց աղաւթիւքն ողորմի. Քս. պատուական կրանաւորին տր. Յովսէփին եւ Յորդանան մղղասին. եւ որդոյ նոր. Մկրտչին եւ սակաւ աշխատողիս Դաթէոս արէղիս: Եւ Գրգրին. վերջին ստացողին, (ընդգծուածը յետոյ աւելացրած):

Ընդ սոցին եւ ինձ անպիտան գրչիս Մանէլիս եւ իմ ծնողացն Ած. ողորմի. ասացէք եւ Քի. փառք յաւիտեանս ամէն:

* Ովանէս արեղան, հաւանօրէն, յիշատակարանի շարադրողն է:

* Յակոբ գրիչը յիշուած է եւ 30ա., բայց գրել է նա մինչեւ 70բ., ապա շարունակել է Մանուէլ գրիչը: